

ՃԱՆԱԶՎԱԾ ԿՈՎԿԱՍԱԳԵՏԸ ՊԱՎԵԼ ՉՈՐԱՆՅԱՆ



2017 թ. մայիսի 18-ին 69 տարեկան հասակում վախճանվեց անվանի պատմաբան, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի «Արևելյան աղբյուրագիտության և պատմագրության» բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ «Բանբեր հայագիտության» միջազգային հանդեսի գլխավոր խմբագիր, ՀՀ ՊՆ պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի ավագ գիտնական-վերլուծաբան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Պավել Աշոտի Չորանյանը:

Պավել Չորանյանը ծնվել է 1948 թ. մարտի 15-ին Ադրբեջանական ԽՍՀ Խանլարի շրջանում (հայրենի գյուղը՝ Փիփ-Չագլիկ): Կրթությունը ստացել է տեղի հայկական միջնակարգ դպրոցում, այնուհետև 1973 թ. գերազանցության դիպլոմով ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1974-1976 թթ. կովկասագիտություն-վրացագիտություն մասնագիտացմամբ ուսանել է ՀԽՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտի ասպիրանտուրայում՝ ուսումնառությունը իրականացնելով Վրաց. ԽՍՀ ԳԱ ձեռագրերի ինստիտուտում՝ ակադեմիկոս Ե. Պ. Մետրեվելու ղեկավարությամբ:

Թեկնածուական ատենախոսությունը Պ. Չորանյանը պաշտպանել է 1982 թ. («Հայերը Մերձավոր Արևելքում ըստ վրաց ուղեգրությունների»), իսկ դոկտորականը՝ 2006 թ. («Հայ-ռուս-վրացական հարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին»):

Պրոֆ. Չորանյանը գիտական գործունեությունը սկսել է Արևելագիտության ինստիտուտում՝ անցնելով ճանապարհ կրտսեր գիտաշխատողից մինչև գիտական գծով փոխստեղծ: 1977-1985 թթ. նա աշխատել է որպես Արևելագիտության ինստիտուտի Կովկասագիտության և բյուզանդագիտության բաժնի կրտսեր գիտաշխատող, 1985-1995 թթ.՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում՝ որպես ավագ գիտաշխատող, 1995-1996 թթ.՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի «Քրիստոնյա Արևելք» բաժնի վարիչ: 2002 թ. մինչև 2013 թ. նա պաշտոնավարել է որպես Արևելագիտության ինստիտուտի գիտական գծով փոխստեղծ: 2007 թ.-ից, որպես ավագ գիտնական-վերլուծաբան, Պ. Չորանյանը աշխատել է ՀՀ ՊՆ ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտում (ՀՀ ՊՆ պաշտպանական ազգային հետազոտական համալսարան):

Պ. Չորանյանը նաև ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ԲՈՂ-ի 006 «Համաշխարհային պատմություն», այնուհետև՝ ՀՀ ՊՆ պաշտպանական ազգային հետազոտական համալսարանում գործող ԲՈՂ-ի 056 «Քաղաքագիտություն» մասնագիտական խորհուրդների անդամ էր:

Վաստակաշատ գիտնականը հեղինակել է 150-ից ավելի գիտական հրատարակումներ: Նրա գիտական հետազոտությունները նվիրված են հայոց պատմության, հայ-վրացական, հայ-ռուսական հարաբերությունների, վրացական ուղեգրությունների ուսումնասիրությանը: Նրա գրչին են պատկանում «Վրացական ուղեգրությունները և նրանց տեղեկությունները հայերի մասին» և «Հայ-ռուս-վրացական հարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին» հիմնարար մենագրությունները: Թարգմանաբար հրատարակել է Ա. Շանիձեի «Հին վրացերեն լեզվի քերականություն» աշխատությունը (Հ. Մարգարյանի հետ համատեղ): 1990 թ. լույս է տեսել Պ. Չոբանյանի մասնակցությամբ կազմված «Հայ-ռուսական հարաբերությունները XVIII դարի երկրորդ կեսին (1760-1800 թթ.)» փաստաթղթերի ժողովածուն: 1999 թ. նրա առաջաբանով և աշխատասիրությամբ վերահրատարակվել են Մակար Բարխուտարյանցի «Աղվանից երկիր և դրացիքե ու «Արցախ» տեղագրական աշխատությունները:

Պրոֆ. Չոբանյանը լայնախոհ գիտնական էր. նրա բեղուն գրչին են պատկանում ուսումնասիրություններ հայ ժողովրդի պատմության համար կարևորագույն նշանակություն ունեցող հայ գաղթօջախների, Արցախի միջնադարյան պատմության հիմնահարցերի վերաբերյալ: Նրա առանձնահատուկ ուշադրության կենտրոնում էին հատկապես հայ միջնադարյան աղբյուրագիտության և պատմագրության հարցերը, այդ ուղղության զարգացման գերակայությունները:

Պ. Չոբանյանը իր գրչով պայքարում էր նաև Հայաստանի պատմությունը նենգափոխող թուրք-ադրբեջանական կեղծարարների դեմ՝ ցույց տալիս նրանց ընտրած ռազմավարությունը և տալիս հակազդեցության ուղենիշներ:

Վաստակաշատ գիտնականը բազմաթիվ հոդվածներով է հանդես եկել նաև «Հայ եկեղեցու հանրագիտարան», «Քրիստոնյա Հայաստան», «Ղարաբաղյան ազատագրական պատերազմ (1988-1994 թթ.)» հանրագիտարաններում, «Հայ դասական մատենագրություն» էլեկտրոնային գրադարանի շարքում և այլն:

Հմուտ պատմաբան-միջնադարագետը ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի կողմից հրատարակվող «Հայաստանի հարակից երկրների պատմություն» քառահատորյակի հեղինակներից և խմբագրական խորհրդի անդամներից էր, այդ հրատարակության երկրորդ հատորի պատասխանատու խմբագիրը (2017 թ.): Տարբեր տարիներին հրատարակված «Հայոց պատմություն» դպրոցական դասագրքերում նա հեղինակել է ուշ միջնադարյան Հայաստանի և Արևելյան Այսրկովկասի պատմության հատվածները:

Հեղինակավոր հետազոտողը արտասահմանյան մի շարք երկրներում մասնակցել է միջազգային բազմաթիվ գիտաժողովների, զեկուցումներով հանդես է եկել Արևելագետների 35-րդ (Բուդապեշտ) և 37-րդ (Մոսկվա) համաշխարհային կոնգրեսներում:

Պրոֆ. Պ. Չոբանյանը վարել է նաև բեղմնավոր գիտամանկավարժական աշխատանք. ընդհանուր ու մասնագիտական դասընթացներ Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանում, Երևանի պետական համալսարանում, Մխիթարյան միաբանության Երևանի կրթահամալիրում, ՀՀ ԳԱԱ

գիտակրթական միջազգային կենտրոնի «Արևելագիտություն» մասնագիտությամբ մագիստրատուրայում և այլն:

Նրա գիտական դեկավարությամբ պաշտպանվել են մեկ տասնյակից ավելի թեկնածուական ատենախոսություններ, եղել է բազմաթիվ թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների ընդդիմախոս:

Պ. Չոբանյանը 1999-2003 թթ. «Պատմա-բանասիրական հանդեսի» գլխավոր խմբագրի տեղակալն էր, 2013-ից՝ «Բանբեր հայագիտության» միջազգային հանդեսի գլխավոր խմբագիրը: Երկար տարիներ նա եղել է մի շարք գիտական և խմբագրական խորհուրդների անդամ:

Հետխորհրդային ժամանակաշրջանում բազմապատակ գիտնականը մասնակցել է պետական և հասարակական կարևորության տարբեր գործընթացների, եղել է ՀՀ նախագահին առընթեր Ներման հանձնաժողովի անդամ:

Պ. Չոբանյանը պարգևատրվել է ՀՀ ՊՆ «Գարեգին Նժդեհ» մեդալով (2010 թ.), ՌԴ «150 лет со дня рождения К. Мечиева» (2010 թ.), «20 лет провозглашения Нагорно-Карабахской Республики» (2011 թ.) հուշամեդալներով:

Վաստակաշատ գիտնականի, մտավորականի և գիտության նվիրյալի՝ Պավել Աշոտի Չոբանյանի հիշատակը անմար կմնա սերունդների հիշողության մեջ:

ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ